

Հղումով փոխանցում

Ուղեցույց



Հղումով փոխանցումներ

Acba digital-ի օգտատերերը այսուհետ հնարավորություն կունենան գումարի ստացման հղում ուղարկել ցանկալի անձին, ով կարող է չհանդիսանալ Ակբա բանկի հաճախորդ: Հղումը ստացած անձն այն բացելուց հետո պետք է մուտքագրի քարտի տվյալները և վայրկյանների ընթացքում փոխանցումը կկատարվի: Գործարքներն իրականացվում են 24/7 ռեժիմով:

!!!

Հղումը հնարավոր է ուղարկել միանգամից մի քանի անձանց և նրանցից ստանալ ակնկալվող գումարը:

!!!

Հղման ստեղծում



Հղումով փոխանցման հայտ ձևավորելու համար անհրաժեշտ է հավելվածի առաջին էջից ընտրել acba share կոճակը:

1





Acba share բաժնից անհրաժեշտ է ընտրել «Հղումով փոխանցում» կոճակը:

2

Նոր բացվող էջում անհրաժեշտ է լրացնել ակնկալվող գումարի չափը և սեղմել «Ստանալ հղում» կոճակը:

3



Գործարքի հաստատումից հետո համակարգը կգեներացնի հղում, որով հնարավոր է կիսվել սմարթֆոնի կողմից առաջարկվող ուղիներից ցանկացածով:

3


Հղման դիտարկում, պատճենում կամ չեղարկում



Հղումը գործում է անժամկետ և այն հնարավոր է օգտագործել բազմակի անգամներ:
Հղումը գտնել, պատճենել կամ չեղարկել հնարավոր է «Փոխանցումների պատմություն» բաժնից:
Անհրաժեշտ է մուտք գործել «Փոխանցել» բաժին, այնուհետև ընտրել «Փոխանցումների պատմություն» կոճակը:






Փոխանցում



Հղումը ստացած անձն այն բացելուց հետո կհայտնվի նոր տիրույթում, որտեղ կտեսնի թե ստացողն ով է, գումարի և վճարվելիք միջնորդավճարի չափը:



«Փոխանցել» կոճակը սեղմելուց հետո պետք է կմուտքագրել բարտի տվյալները, այնուհետև կհայտնվի 3D Secure-ի էջը, որտեղ պետք է մուտքագրել հեռախոսահամարին ստացված կոդը:



Փոխանցումը կատարելուց հետո համակարգը կցուցադրի գործարքի անդորրագիրը, որը հնարավոր է նաև ներբեռնել և ուղարկել գումարը ստացողին:

